ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ՀՈՒՆՎԱՐԻ 2025թվականի N 38-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24-րդ ենթակետով,Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 17-ի N 1066-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ կետով՝

Որոշում եմ.

1.Լոռու մարզի Թումանյան համայնքի Դսեղ բնակավայրում գտնվող, Թումանյան համայնքի սեփականություն հանդիսացող, 06-035-0109-0084 կադաստրային ծածկագրով 0.102251 հա գյուղատնտեսական նշանակության գյուղ այլ հողատեսք գործառնական նշանակությունը փոխել գյուղատնտեսական 5-րդ կարգի վարելահող գործառնական նշանակության:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

20 25 թ. հունվարի 22
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 ՀՈՒՆՎԱՐԻ 2025թվականի N 39-Ա

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Թումանյան համայնքի բնակչության պաշտպանության համակարգի նորմալ և արդյունավետ գործունեության, աղետների ռիսկի նվազեցման միջոցառումների կազմակերպման և իրականացման, արտակարգ իրավիճակներում գործելու ընթացակարգերի սահմանման, արտակարգ իրավիճակներում համայնքի բնակիչների պաշտպանության կազմակերպման նպատակով, ղեկավարվելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ և 41-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետերով՝
Որոշում եմ.

1. Հաստատել Թումանյան համայնքի.
1) խորհրդի կազմը ՝ համաձայն հավելված N 1-ի.
2) Աղետների ռիսկի կառավարման խորհրդի աշխատակարգը և գործառույթները՝ համաձայն հավելված N 2-ի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

20 25թ. հունվարի 23
ք.Թումանյան

Հավելված N 1
ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի ղեկավարի
«23» հունվարի 2025 թ-ի N 39-Ա որոշման

ԿԱԶՄ
ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Համայնքի աղետների ռիսկի կառավարման խորհրդի կազմը՝

1. խորհրդի ղեկավար՝ Սուրեն Թումանյան (համայնքի ղեկավար),
2. խորհրդի ղեկավարի տեղակալ-տարհանման և պատսպարման պատասխանատու՝ Ռոման Շաքարյան (համայնքի ղեկավարի տեղակալ),
3. խորհրդի քարտուղար-ազդարարման և իրազեկման պատասխանատու՝ Ռուզաննա Շահվերդյան (աշխատակազմի քարտուղար),
4. խորհրդի անդամներ՝

1) ավագանու անդամ՝ Նիկալ Դալլաքյան ,
2) ավագանու անդամ՝ Կարո Ղազարյան ,
3) ավագանու անդամ՝ Հրանուշ Վանյան ,
4) բնակավայրի վարչական ղեկավարներ՝

ա. Քարինջ բնակավայրի վարչական ղեկավար՝ Նորիկ Մկրտումյան
բ. Մարց բնակավայրի վարչական ղեկավար՝ Արեն Ղազարյան,
գ. Լորուտ բնակավայրի վարչական ղեկավար՝ Սարիբեկ Սարգսյան ,
դ. Շամուտ բնակավայրի վարչական ղեկավար՝ Արսեն Քոչարյան,
ե. Աթան բնակավայրի վարչական ղեկավար՝ Տիգրան Քոչարյան,
զ. Ահնիձոր բնակավայրի վարչական ղեկավար՝ Արման Մաթևոսյան,
է. Չկալով բնակավայրի վարչական ղեկավար՝ Կորյուն Մխիթարյան,
ը. Դսեղ բնակավայրի վարչական ղեկավար՝ Գառնիկ Հովսեփյան,

5) ոլորտային պատասխանատուներ՝

ա. հրշեջ-փրկարարական աշխատանքների պատասխանատու՝ Արմեն Բարսեղյան (Հրշեջ-փրկարարական աշխատանքների պատասխանատու, ՀՀ ԱԻՆ ՓԾ Թումանյանի թիվ 40 հրշեջ-փրկարարական ջոկատի հրամանատար), (համաձայնությամբ),
բ.հասարակական կարգի պահպանման պատասխանատու՝ Հրանտ Վարդանյան (Հասարակական կարգի պահպանման պատասխանատու, Ոստիկանության Լոռու մարզային վարչության Թումանյանի բաժին պետի տեղակալ) , (համաձայնությամբ),
գ. տրանսպորտային ապահովման պատասխանատու՝ Ռոման Շաքարյան, համայնքի ղեկավարի առաջին տեղակալ (համաձայնությամբ),
դ. կապի պատասխանատու՝ Էմմա Սարգսյան (Հայ Փոստ ՓԲԸ ավագ օպերատոր) (համաձայնությամբ),
ե. բժշկական օգնության կազմակերպման պատասխանատու՝ Ստեփան Վարոսյան, («Թումանյանի առողջության կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն), (համաձայնությամբ),
զ. կենսաապահովման կազմակերպման պատասխանատու՝ Գնել Քոչարյան (համայնքի ղեկավարի օգնական),
է. էներգետիկ ապահովման պատասխանատու՝ Գագիկ Պետրոսյան, («Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ աշխատակից) , (համաձայնությամբ),
ը. Ինժեներական միջոցառումների ապահովման պատասխանատու՝ Նորիկ Թորոսյան («Թումանյանի քաղաքային կոմունալ տնտեսություն» ՀՈԱԿ-ի տնօրենի տղակալ),
թ. կոմունալ ապահովման և դիակների ճանաչման, հուղարկավորման կազմակերպման ու հաշվառման պատասխանատու՝ Մառ Քոչարյան («Թումանյանի քաղաքային կոմունալ տնտեսություն» ՀՈԱԿ-ի տնօրենի ժ/պ)
ժ. անհայտ կորածների և ընտանիքի անդամների միավորման, կորած, միայնակ մնացած երեխաների ու ծերերի հարցերով զբաղվող պատասխանատու՝ Նանե Էվոյան, համայնքի ղեկավարի օգնական:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի ղեկավարի
«23» հունվարի 2025 թ-ի N 39-Ա որոշման

ԱՇԽԱՏԱԿԱՐԳ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐ
ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

1. ԱՌԿ խորհրդի աշխատակարգը.

1) Սույն աշխատակարգով սահմանվում են (այսուհետ՝ Աշխատակարգ) Թումանյան համայնքի աղետների ռիսկի կառավարման (այսուհետ՝ ԱՌԿ) խորհրդի լիազորությունների և գործառույթների իրականացման ընթացակարգերը:

2) Համայնքի ԱՌԿ խորհրդի նիստերը գումարվում են Թումանյանի համայնքապետարանում, իսկ դրա անհնարինության դեպքում՝ ԱՌԿ խորհրդի ղեկավարի որոշմամբ:

3) Համայնքի ԱՌԿ խորհրդի նիստի ժամանակ քննարկվում են համայնքի ԱՌԿ պլանի մշակման, ճշգրտման և խորհրդի անդամների կողմից բարձրացված հարցերը կամ համայնքի ԱՌԿ պլանով սահմանված գործողությունների իրականացումը:

4) Համայնքի ԱՌԿ խորհրդի նիստի ժամանակ ԱՌԿ խորհրդի ոլորտային պատասխանատուները ներկայացնում են իրենց վերապահված ոլորտում կատարված աշխատանքները, առաջ եկած խնդիրները և առաջարկվող նոր միջոցառումները: Համայնքի ԱՌԿ պլանի մշակման, ճշգրտման ժամանակ պատասխանատու են իրենց ոլորտին վերաբերվող համայնքի ԱՌԿ պլանի բաժինների համար, ինչպես նաև համայնքի ԱՌԿ պլանի նախապատրաստական և արձագանքման մասերում իրենց կարգավորման ոլորտի միջոցառումների համար:

5) Համայնքի ԱՌԿ խորհրդի նիստերը գումարվում են տարվա ընթացքում առնվազն երկու անգամ, իսկ դրա անհնարինության դեպքում՝ ԱՌԿ խորհրդի ղեկավարի որոշմամբ:

6) Համայնքի ԱՌԿ խորհրդի նիստերն արձանագրվում են քարտուղարի կողմից և ներառվում են համայնքի ԱՌԿ պլանում:

1. ԱՌԿ խորհրդի ԱՌԿ նախապատրաստական գործառույթներն են՝

1) համայնքի բնակչության, նյութական արժեքների պաշտպանության ապահովումը,

2) համայնքի վտանգների, խոցելիության և կարողությունների բացահայտումը,

3) ԱՌԿ պլանի մշակումը, իրականացման ապահովումը, վերահսկումը,

4) Աղետների ռիսկի նվազեցման (այսուհետ՝ ԱՌՆ) և աղետներին դիմակայելու կարողությունների զարգացումը,

5) համայնքում ԱՌՆ միջավայրի և մշակույթի ձևավորումն ու դրանց տարածումը,

6) աղետներին արձագանքման համակարգի ձևավորումն, այդ նպատակով փրկարարական, հրդեհաշիջման և անհրաժեշտ կենսապահովման միջոցների ձեռք բերման, կուտակման և նպատակային օգտագործման իրականացումը,

7) ԱՌԿ պլանի միջոցառումների ինտեգրման ապահովումը համայնքի զարգացման ծրագրում,

8) համայնքի վաղ ազդարարման համակարգի ստեղծումն ու վերջինիս պահպանումը,

9) «Դիմակայուն համայնք» ստեղծելու նպատակով ԱՌՆ գործընթացներում ուսումնական հաստատությունների և բնակչության ակտիվ ներգրավվածության ապահովումը,

10) բնակչության համար արտակարգ իրավիճակներում վարքականոնների և պարտականությունների տարածումը, դրանց կիրառման ապահովումը,

11) նախապատրաստումը համայնքի բնակչությանը կատարելու փրկարարական և հրդեհաշիջման պարզագույն աշխատանքներ,

12) հրդեհների կանխարգելման աշխատանքների իրականացնումը՝ բնակչության իրազեկման և ուսուցման միջոցով,

13) վարժանքների կազմակերպումը և անցկացնումը

14) աղետների ռիսկի կառավարման պլանի ճշգրտումը:

2. ԱՌԿ խորհրդի ԱԻ արձագանքման գործառույթներն են՝

1) համայնքի բնակչության ազդարարման իրականացումը,

2) արտակարգ իրավիճակների ժամանակ տեղեկատվության փոխանակման իրականացումը,

3) համայնքի բնակչության տարահանման իրականացումը,

4) կազմակերպում է հատուկ կարիքավոր մարդկանց, հղի կանաց և երեխաների անվտանգ տարահանումը/պատսպարումը,

5) իր իրավասության շրջանակներում կազմակերպում է որոնման, փրկման և հրդեհաշիջման աշխատանքներ,

6) կազմակերպում է բնակչության նյութական և հասարակական արժեքների պահպանությունը, անվտանգության ապահովումը փրկարարական գործողությունների և տարահանման վայրերում,

7) դիակապտության, թալանի, բռնության և այլ հանցավոր երևույթների կանխման ապահովումը,

8) ճանապարհների մաքրման, կամուրջների վերականգնման և նոր տարանցիկ ճանապարհների հիմնման ապահովումը,

9) արտակարգ իրավիճակի հետևանքով առաջացած շինարարական աղբի մաքրման և տեղափոխման ապահովումը,

10) առաջին օգնության իրականացման ապահովումը,

11) սանիտարահիգիենիկ և համաճարակային վիճակի հսկողության ապահովումը,

12) բնակչությանը սննդով, ջրով, դեղորայքով և առաջին անհրաժեշտության պարագաներով ապահովումը,

13) ջրային և սննդամթերքի պաշարների կուտակումը և նպատակային օգտագործումը,

14) բնակչության կոմունալ-էներգետիկ ապահովումը,

15) տուժած տարածքների գազամատակարարման և էներգամատակարարման վերականգնման կազմակերպման, անհրաժեշտության դեպքում առանձին հատվածներում դրանց դադարեցման ապահովումը,

16) դիակների հուղարկավորման համար հողհատկացման և հուղարկավորման կազմակերպման ապահովումը,

17) կորած, միայնակ մնացած երեխաների հայտնաբերման, գրանցման և համապատասխան սոցիալական ծառայություններ ուղղորդման ապահովումը,

18) ընտանիքներին երեխաների վերամիավորման կազմակերպման ապահովումը,

19) աղետից հետո ստեղծված իրավիճակի, շենքերի, շինությունների, կամուրջների, թունելների և այլ առանցքային հանգույցների տեխնիկական վիճակի գնահատման կազմակերպման ապահովումը,

20) վնասի և կարիքների վաղ գնահատումը և հայտերի ներկայացումը մարզային կամ հանրապետական հանձնաժողովին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 ՀՈՒՆՎԱՐԻ 2025թվականի N 40-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ ՋՐՀԵՂԵՂՆԵՐԻ, ՀԵՂԵՂՈՒՄՆԵՐԻ,ՍԵԼԱՎՆԵՐԻ ԵՎ ՍՈՂԱՆՔՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ,ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՈՒ ՎԵՐԱՑՄԱՆ,ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի բ), գ), դ) կետերով,, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ,35-րդ հոդվածի 1-ին կետի 29-րդ ենթակետով և 41-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետերով և հիմք ընդունելով Թումանյան համայնքի աղետների ռիսկի նվազեցման միջոցառումների կազմակերպման և իրականացման, արտակարգ իրավիճակներում գործելու ընթացակարգերի սահմանման, արտակարգ իրավիճակներում համայնքի բնակիչների պաշտպանության կազմակերպման նպատակը՝

Որոշում եմ՝

1. Հաստատել Լոռու մարզի Թումանյան համայնքում 2025 թվականի ընթացքում հնարավոր ջրհեղեղների, հեղեղումների, սելավների և սողանքների կանխարգելման, հետևանքների նվազեցման ու վերացման միջոցառումների պլանը՝ համաձայն թիվ 1 հավելվածի:

1) մինչև 2025 թվականի փետրվարի 10-ը ՀՀ ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության (այսուհետ՝ ՆԳՆ ՓԾ) Լոռու մարզային փրկարարական վարչությանը տրամադրել ՀՀ պետական և համայնքային բյուջեներով ու այլ ծրագրերով 2025 թվականի ընթացքում համայնքի տարածքում նախատեսված աղետների ռիսկի կառավարման և արտակարգ իրավիճակների կանխարգելիչ միջոցառումների վերաբերյալ տեղեկատվություն՝ համաձայն թիվ 2 հավելվածի.
2) ձեռնարկել միջոցներ սույն որոշման 1-ին կետով հաստատված պլանով, ինչպես նաև 2-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված միջոցառումների իրականացման ապահովման ուղղությամբ և կատարված աշխատանքների վերաբերյալ տեղեկատվությունը մինչև յուրաքանչյուր հաջորդ ամսվա 3-ը տրամադրել ՀՀ ՆԳՆ ՓԾ Լոռու մարզային փրկարարական վարչությանը (lorimpv2023@gmail.com) էլեկտրոնային հասցեով.
3) մինչև ս/թ փետրվարի 5-ը՝ Լոռու մարզային փրկարարական վարչություն ներկայացնել առաջարկություններ համայնքին սպառնացող պոտենցիալ վտանգավոր տեղամասերի և բնակչության անվտանգության ապահովման ուղղությամբ նախատեսվող միջոցառումների վերաբերյալ՝ համաձայն թիվ 3 հավելվածի.
4) մինչև ս/թ փետրվարի 5-ը՝ Լոռու մարզային փրկարարական վարչություն ներկայացնել առաջարկություններ 2025թ. հնարավոր գարնանային վարարումների և սելավների ռիսկերից ՀՀ Լոռու մարզի բնակավայրերը, տնտեսական արժեքներ ներկայացնող տարածքները, գյուղատնտեսական հողատեսքերն ու բնակչության գույքը պաշտպանելու նպատակով անհրաժեշտ կանխարգելիչ միջոցառումների իրականացման վերաբերյալ՝ համաձայն թիվ 4 հավելվածի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

20 25 թ. հունվարի 23
ք.Թումանյան

Հավելված N 1
ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի ավագանու
2025թ. հունվարի 23-ի N 40-Ա որոշման

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ ՋՐՀԵՂԵՂՆԵՐԻ, ՀԵՂԵՂՈՒՄՆԵՐԻ, ՍԵԼԱՎՆԵՐԻ ԵՎ ՍՈՂԱՆՔՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ, ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՈՒ ՎԵՐԱՑՄԱՆ

Հ/Հ	Միջոցառումների անվանումները	Կատարող	Կատարման ժամկետը
1	2	3	4
	1. Կանխարգելիչ միջոցառումներ		
1.	Ուսումնասիրել և գնահատել գետերի հունները, հակահեղեղային կառույցների և սելավատարների վիճակը և արդյունքները ներկայացնել Լոռու մարզային փրկարարական վարչություն	Վարչական ղեկավարներ և համայնքի ղեկավարի օգնական <<Թումանյան համայնքի ԿՏ >> ՀՈԱԿ	Մինչև 10.03.2025թ.
2.	Նախապատրաստել համապատասխան տեխնիկա և շինարարական նյութեր՝ գետի հունի, հակահեղեղային կառույցների և սելավատարների անհրաժեշտ հատվածները մաքրելու, վտանգավոր տեղամասերում ափապաշտպան կառույցները ամրացնելու համար		
3.	Մաքրել համայնքի տարածքով հոսող գետերի հունները, հակահեղեղային կառույցները և սելավատարները: Վտանգավոր տեղամասերում ամրացնել ափապաշտպան կառույցները		Մինչև 10.03.2025թ.
4.	Բնակչության հետ կատարել բացատրական աշխատանքներ՝ ջրածածկման, հեղեղավտանգ, սելավավտանգ և սողանքավտանգ գոտիներում դաշտային աշխատանքները կարգավորելու համար		Մշտական
5.	Պատրաստ վիճակի բերել համայնքային կազմավորումները և արագ արձագանքման փրկարար խմբերը, դրանք հագեցնել համապատասխան անձնակազմով, տեխնիկայով և սարքավորումներով	Համայնքների ղեկավարի առաջին տեղակալ համայնքի ղեկավարի օգնական <<Թումանյան համայնքի ԿՏ >> ՀՈԱԿ	Մինչև 10.03.2025թ.

1	2	3	4
	2. Հիմնական միջոցառումներ		
6.	Իրազեկել վտանգավոր տարածքներում գտնվող բնակչությանը՝ իրենց սպառնացող վտանգների, նկուղային հարկերից իրենց ունեցվածքի տեղափոխման անհրաժեշտության, ինչպես նաև նման դեպքերում բնակչության վարվելակերպի կանոնների մասին	Համայնքների ղեկավարի առաջին տեղակալ, Վարչական ղեկավարներ և համայնքի ղեկավարի օգնական	Մշտապես
7.	Հնարավոր վտանգավոր վայրերում կազմակերպել հսկողություն՝ արագ արձագանքելու և համապատասխան միջոցներ ձեռք առնելու համար	Վարչական ղեկավարներ և համայնքի ղեկավարի օգնական	Անհրաժեշտության դեպքում
8.	Անհրաժեշտության դեպքում կազմակերպել և իրականացնել վտանգավոր տարածքներից անվտանգ տարածք՝ մարդկանց, կենդանիների և նյութական արժեքների ժամանակավոր տեղափոխումը և տեղաբաշխումը	Վարչական ղեկավարներ և համայնքի ղեկավարի օգնական	Անհրաժեշտության դեպքում
9.	Տուժած շրջաններում կազմակերպել և իրականացնել փրկարարական և այլ անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներ	Համայնքների ղեկավարի առաջին տեղակալ համայնքի ղեկավարի օգնական <<Թումանյան համայնքի ԿՏ >> ՀՈԱԿ	Ըստ անհրաժեշտության
10.	Ներգրավել աշխատունակ քաղաքացիներին (իրենց համաձայնությամբ), ջրհեղեղների, հեղեղումների, սելավների և սողանքների պատճառած հետևանքների վերացման գործընթացին՝ ըստ մասնագիտական և անձնական հնարավորությունների	Համայնքների ղեկավարի առաջին տեղակալ Վարչական ղեկավարներ և համայնքի ղեկավարի օգնական	Անհրաժեշտության դեպքում

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի ավագանու
2025թ. հունվարի 23-ի N 40-Ա որոշման

Տեղեկատվություն

ՀՀ Լոռու մարզում ՀՀ պետական և համայնքային բյուջեներով ու այլ ծրագրերով տարվա ընթացքում պլանավորված կանխարգելիչ միջոցառումների վերաբերյալ

ՀՀ ը/կ	Մարզի, համայնքի (բնակավայրի) անվանումը	Միջոցառման անվանումը	Անցկացման ժամկետը	Ֆինանսավորման աղբյուրը	Գումարի չափը (հազ. դրամ)	Պատասխանատու, կատարող (անուն, ազգանուն, հեռախոսահամար)	Նշումներ
1	2	3	4	5	6	7	8
1	Թումանյան համայնք	Գետերի հունների և սելավատարերի մաքրում	Տարվա ընթացքում	Համայնքի բյուջե	1400000 ՀՀ դրամ	«Թումանյան համայնքի կոմունալ տնտեսություն» ՀՈԱԿ-ի տնօրենի ժ/պ Մառ Քոչարյան	

Համայնքի ղեկավար Սուրեն Թումանյան

Հավելված N 3
ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի ավագանու
2025թ. հունվարի 23-ի N 40-Ա որոշման

ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿ

Թումանյան համայնքին սպառնացող պոտենցիալ վտանգավոր տեղամասերի և բնակչության անվտանգության ապահովման ուղղությամբ միջոցառումների վերաբերյալ առաջարկությունների մասին

1. Վտանգի (աղետի) անվանումը(ները) - սելավ - հեղեղում - սողանք - քարաթափում - և այլն	- հեղեղում - սողանք
2. Վտանգավոր տեղամասի գտնվելու վայրը(երը)	Թումանյան քաղաքի սկզբնամասից մինչև Քոբայր թաղամաս, Հ70 միջհամայնքային ավտոճանապարհի 27,5 կմ
3. Առաջացման հնարավոր պատճառները	Հորդառատ անձրևներ
4. Վտանգավոր տեղամասերի նկարագրությունը: Վտանգավոր գոտում գտնվող շենքերի, շինությունների և բնակչության թիվը	Մ6 ավտոճանապարհի հարակից տարածք Հ70 միջհամայնքային ավտոճանապարհի 27,5 կմ
5. Կանխարգելիչ միջոցառումների առաջարկությունները իրականացնելու համար	Գետի հունի մաքրում, պատնեշների կառուցում
6. Համայնքների բյուջեներում կամ այլ ծրագրերով 2025թ-ին պլանավորված, հնարավոր արտակարգ իրավիճակների կանխարգելիչ միջոցառումների համար ծախսերի չափը ըստ միջոցառումների տեսակների	1400000 ՀՀ դրամ

Համայնքի ղեկավար Սուրեն Թումանյան

Հավելված N 4
ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի ավագանու
2025թ. հունվարի 23-ի N 40-Ա որոշման

2025թ. հնարավոր գարնանային վարարումների և սելավների ռիսկերից
ՀՀ Լոռու մարզի բնակավայրերը, տնտեսական արժեքներ ներկայացնող տարածքները, գյուղատնտեսական հողատեսքերն ու բնակչության գույքը պաշտպանելու նպատակով անհրաժեշտ կանխարգելիչ միջոցառումների իրականացման վերաբերյալ

ՀՀ ը/կ	Համայնքի (բնակավայրի) անվանումը	Աշխատանքների կատարման օբյեկտը	Անհրաժեշտ աշխատանքները և ծավալները	Վտանգավոր գոտում գտնվող շենքերի, շինությունների և բնակչության թիվը
1	*2*	*3*	*4*	*5*
1.	Թումանյան Համայնք	Թումանյան քաղաքի սկզբնամասից մինչև Քոբայր թաղամաս	Հենապատի կառուցում ,գետի հունի մաքրում	Գազալցակայան 2 անձ,խանութ 1 անձ,<<Արգիշտի - 2>>ՍՊԸ 2 անձ

Համայնքի ղեկավար Սուրեն Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 ՀՈՒՆՎԱՐԻ 2025թվականի N 41-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով, «Քաղաքացիական պաշտպանության մասին» օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 22-ի N 46-Ն որոշման հավելված 1-ի 16-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2024 թվականի դեկտեմբերի 19-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի մասին» թիվ 1052-Ա որոշումը՝

Որոշում եմ.

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնքի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2025 թվականի հիմնական միջոցառումների պլանը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշման 1-ին կետով հաստատված պլանի միջոցառումների կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել համայնքի ղեկավարի առաջին տեղակալ՝ Ռոման Շաքարյանին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

20 25թ. հունվարի 23
ք.Թումանյան

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի ավագանու
2025թ. հունվարի 23-ի N 41-Ա որոշման

ՊԼԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

ՀՀ ը/կ	Միջոցառումը և թեման	Կատարման ժամկետը	Պատասխանատու	Կատարող-ներ	Մասնակիցներ	Նշումներ
1	2	3	4	5	6	7
4.Փրկարարական ուժերի պատրաստության բարձրացման ուղղությամբ						
4.3	Մասնակցություն ՀՀ Լոռու մարզի տարածքում հասարակական, կամավորական փրկարարական շտաբների ձևավորման ու զարգացման ուղղությամբ աշխատանքների իրականացմանը	Տարվա ընթացքում	Լոռու մարզպետ, ՄՓՎ պետ	ՄՓՎ ստորաբաժանումներ	ՄՓՎ անձնակազմ, Լոռու մարզի համայնքներ	
	1) Հայաստանի Հանրապետության համայնքներում, հատկապես սահմանամերձ և բարձր լեռնային բնակավայրերում արտակարգ իրավիճակներին արագ արձագանքման նպատակով կամավորական հրշեջ հենակետերի ստեղծման ուղղությամբ աշխատանքների իրականացում	Տարվա ընթացքում				
	2) Ավստրիական և Հայկական Կարմիր խաչի ընկերությունների հետ համատեղ գործող 5 հենակետերի կարողությունների զարգացում և 3 նոր հենակետերի ստեղծում	Տարվա ընթացքում				
II ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ						
11. Օպերատիվ տակտիկական պատրաստություն						
11.8 Գործնական պարապմունքներ						
	Թումանյան համայնքի Քարինջ բնակավայրում «Օդային տագնապի ժամանակ	23.06				

	բնակչության պատասխանատվությունը՝ էլեկտրական շչակների գործարկմամբ» թեմայով գործնական պարապմունքներ					
	Թումանյան համայնքում «Օդային տագնապի ժամանակ բնակչության պատասխանատվությունը՝ էլեկտրական շչակների գործարկմամբ» թեմայով գործնական պարապմունքներ	24.11				

Հապավումներ՝

ՀՀ՝ Հայաստանի Հանրապետություն

ԱԻ՝ արտակարգ իրավիճակներ

ԱԻՆ՝ արտակարգ իրավիճակների նախարարություն

ՔՊ՝ քաղաքացիական պաշտպանություն

ՊՆ՝ պաշտպանության նախարարություն

ԱՌՆ՝ աղետների ռիսկի նվազեցում

ՓԾ՝ փրկարարծառայություն

ՃՈ՝ ճանապարհային ոստիկանություն

ՄՓՎ՝ մարզային փրկարարական վարչություն

ՀԾՈՒ՝ հրամանատարաշտաբային ուսումնավարժություն

ՃԿԿ՝ ճգնաժամային կառավարման կենտրոն

ՇՈՒ՝ շտաբային ուսումնավարժություն

ՀՓՁ՝ հրշեջ-փրկարարական ջոկատ

ԲՊ՝ բնակչության պաշտպանություն

ՃԿՊԱ՝ ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա

ԲՊԱՌՆ՝ բնակչության պաշտպանության և աղետների ռիսկերի նվազեցման

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ՀՈՒՆՎԱՐԻ 2025թվականի N 42-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով,ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 29-րդ կետի գ) ենթակետով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021թ. մայիսի 10-ի <<Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին>> N 104-Լ հրամանով , հիմք ընդունելով Արտիկ Աշոտի Գրիգորյանի դիմումը և համայնքային ծառայության առաջատար մասնագետի առաջարկությունը՝

Որոշում եմ.

1. Լոռու մարզի Թումանյան համայնքի Դսեղ գյուղի կադաստրային քարտեզի 06-035-0040-0008 ծածկագրի անշարժ գույքին տրամադրել հետևյալ հասցեն՝ ՀՀ, Լոռու մարզ, Թումանյան համայնք, գ.Դսեղ, 4-րդ փողոց, 22 բնակելի տուն:

2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ**

2025թ. հունվարի 27-ի
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ՀՈՒՆՎԱՐԻ 2025թվականի N 43-Ա

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴՍԵՂ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ,ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՁԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ, ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, 10.06.2008թ.<<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՕ-117-Ն օրենքով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 29-րդ կետի գ) ենթակետով,,ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 8-րդ կետի պահանջներով, հաշվի առնելով, որ հողատարածքը չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում,չի հակասում քաղաքաշինական նորմերին,չի առաջացնում սերվիտուտ,հիմք ընդունելով ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը, տրված՝ 23.01.2025թ. / գրանցված է սեղանամատյանում N 331 գործ թիվ 140/, Դսեղ գյուղի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 22.04.1991թ. թիվ 6 որոշումից քաղվածքները և քաղաքացի Նվեր Հովիկի Ղազարյանի /մուտք՝ 27.01.2025թ. թիվ 48/ դիմումը՝
Որոշում եմ.

1. Վերականգնել և ճանաչել Նվեր Հովիկի Ղազարյանի/ծնված՝ 23.02.1970թ./ սեփականության իրավունքը Թումանյան համայնք, գյուղ Դսեղ, 46-րդ փողոց 4 հասցեում 06-035-0048-0009 ծածկագրում գտնվող բնակելի տան,օժանդակ շինությանև 0,05957 հա մակերեսով տնամերձ հողամասի նկատմամբ:
2.Վերականգնել և ճանաչել Նվեր Հովիկի Ղազարյանի /ծնված՝ 23.02.1970թ./ սեփականության իրավունքը Թումանյան համայնք, գյուղ Դսեղ06-035-0119-0007 ծածկագրում գտնվող 0,20475 հա մակերեսով վարելահողի նկատմամբ:
3. Վերականգնել և ճանաչել Նվեր Հովիկի Ղազարյանի /ծնված՝ 23.02.1970թ./ սեփականության իրավունքը Թումանյան համայնք, գյուղ Դսեղ 06-035-0114-0051 ծածկագրում գտնվող 0,29561 հա մակերեսով վարելահողի նկատմամբ:
4. Վերականգնել և ճանաչել Նվեր Հովիկի Ղազարյանի /ծնված՝ 23.02.1970թ./ սեփականության իրավունքը Թումանյան համայնք, գյուղ Դսեղ 06-035-0137-0017 ծածկագրում գտնվող 0,49734 հա մակերեսով խոտհարքի նկատմամբ:
5.06-035-0048-0009 ծածկագրում գտնվող անշարժ գույքին տրամադրել նոր փոստային <<ՀՀ Լոռու մարզ, Թումանյան համայնք, գ.Դսեղ 46-րդ փողոց, 4 բնակելի տուն>> հասցե:
6.Հողամասերի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծերով:
7. Բնակելի տունը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ,կառուցված չէ առանց քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով,հողամասը չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:
8. Սույն որոշումն ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

20 25 թ. հունվարի 27
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ՀՈՒՆՎԱՐԻ 2025թվականի N 44-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 29-րդ կետի գ) ենթակետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին >> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021թ. մայիսի 10-ի <<Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին>> N 104-Լ հրամանով , հիմք ընդունելով Արշակ Ալբերտի Աղաբեկյանի դիմումը և համայնքային ծառայության առաջատար մասնագետի առաջարկությունը՝

Որոշում եմ.

1. Լոռու մարզի Թումանյան համայնքի Դսեղգյուղի կադաստրային քարտեզի 06-035-0005-0002 ծածկագրի անշարժ գույքին տրամադրել հետևյալ հասցեն՝ ՀՀ, Լոռու մարզ, Թումանյան համայնք, գ.Դսեղ, 12-րդ փողոց, 36 հողամաս:
2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:
3.Ուժը կորցրած ճանաչել Թումանյան համայնքի ղեկավարի 17.12.2024թ. թիվ 519-Ա որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

20 25թ. հունվարի 27
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ՀՈՒՆՎԱՐԻ 2025թվականի N 45-Ա

<<ԱՐՍԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ>> ԱՁ-ԻՆ 01.01.2025Թ.-31.03.2025Թ. ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Թումանյան համայնքի ավագանու 2024 թվականի նոյեմբերի 22-ի <<ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքում 2025 թվականի տեղական տուրքերի և վճարների տեսակները և դրույքաչափերը սահմանելու մասին>> թիվ 101-Ն որոշման պահանջով և <<Արսեն Պետրոսյան>> ԱՁ-ի տնօրեն Արսեն Պետրոսյանի հայտը՝

Որոշում եմ.

1.<<Արսեն Պետրոսյան>> ԱՁ-ի տնօրեն Արսեն Պետրոսյանին տալ 01.01.2025թ.-31.03.2025թ. ժամանակահատվածում, Թումանյան համայնք, ք.Թումանյան, 18-րդ փ., շ 11 հասցեում ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների վաճառքի թույլտվություն:

2.Աշխատակազմի առաջին կարգի մասնագետին՝ ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված գործունեության թույլտվության համար նախատեսված տեղական տուրքերի գանձումը և սահմանված կարգով տրամադրել թույլտվությունը հավաստող փաստաթուղթը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում <<Արսեն Պետրոսյան>> ԱՁ-ի իրավական ակտն ընդունելու մասին իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

20 25թ. հունվարի 27
ք.Թումանյան